**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

**№ 02/05.1/3118-2021**

**ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**ՊԱՐՈՆ ՏԻԳՐԱՆ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գալստյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Պ-835-30.12.2020-ՖՎ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2021 թվականի փետրվարի 1-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 83 - Ա որոշումը:

Հարգանքով՝

**ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ**

Կատարող՝ Պ. Քացախյան

Հեռ. 010515686

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Պ-835-30.12.2020-ՖՎ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով (այսուհետ՝ Նախագիծ) առաջարկվում է սահմանել, որ հինգ տարին մեկ անգամ ավանդների երաշխավորված չափերի վերանայումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հոգաբարձուների խորհրդի առաջարկությամբ:

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» օրենքի 4-րդ մասի «ժե.1» կետի համաձայն՝ հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի՝ սույն օրենքով սահմանված չափերի վերանայման հարցը՝ Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխանության տեսանկյունից:

Հոգաբարձուների խորհուրդն իրականացնելով իրեն վերապահված լիազորությունը՝ քննարկում է երաշխավորված ավանդի՝ սույն օրենքով սահմանված չափերի վերանայման հարցը: Քննարկումների արդյունքում վերանայման անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կողմից քննարկվում է օրենքում սահմանված չափերի վերանայման և փոփոխությունների կատարման հարցը և օրենքում կատարում համապատասխան փոփոխություններ:

Նախագծով առաջարկվող կարգավորման ընդունման դեպքում ստեղծվելու է մի իրավիճակ, երբ օրենքով սահմանված են լինելու երաշխավորված ավանդի որոշակի չափեր, միաժամանակ ԿԲ խորհրդի որոշմամբ սահմանվելու են օրենքից տարբերվող այլ չափեր:

Այս առումով գտնում ենք, որ տվյալ դեպքում կառաջանա իրավական կոլիզիա «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Կենտրոնական բանկի խորհրդի որոշման միջև, իսկ այդ դեպքում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի համաձայն կկիրառվի ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող նորմատիվ իրավական ակտի՝

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նորմը:

Հաշվի առնելով, որ երաշխավորված ավանդների չափերի վերանայումն իրականացվում է՝ հիմքում ունենալով մի շարք հաշվարկներ ու սահմանված չափանիշեր՝ նպատակահարմար է, որպեսզի այդ չափերի վերանայումն իրականացնի այն մասնագիտացված մարմինը, որը տիրապետում է այդ հաշվարկների համար հիմք հանդիսացող տեղեկատվությանը: Առաջարկվող մոտեցումը բավարարում է նաև միջազգային կառույցների՝ Ավանդներն ապահովագրողների միջազգային ասոցիացիայի և Միջազգային հաշվարկների բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման հիմնարար սկզբունքների պահանջներին:

Ամփոփելով վերոշարադրվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է Նախագծով նախատեսել անցումային դրույթ և սահմանել այնպիսի կարգավորում, համաձայն որի Նախագծով առաջարկվող կարգավորման ներքո մինչև 2025 թվականի դեկտեմբերի 1-ը երաշխավորված ավանդի չափի վերանայման պահից Օրենքով սահմանված երաշխավորված չափերի վերաբերյալ կարգավորումներն ուժը կորցրած կճանաչվեն:

01.02.2021
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 փետրվարի 2021 թվականի N 83 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ՋԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանին (համաձայնությամբ) նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագիծը (Պ-835-30.12.2020-ՖՎ-011/0) քննարկելիս Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

*ՆԱԽԱԳԻԾ*

*Պ-835-30.12.2020-ՖՎ-011/0*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

***Հոդված 1.*** Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 24-ի ՀՕ-142-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածը լրացնել նոր՝ 1.1 մասով.

«1.1 Սույն հոդվածով սահմանված երաշխավորված ավանդի չափերը ենթակա են վերանայման առնվազն հինգ տարին մեկ Հիմնադրամի խորհրդի առաջարկությամբ եւ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ: Այդ որոշման ուժի մեջ մտնելու պահից երաշխավորված ավանդի չափերը համարվում են գործող Կենտրոնական բանկի խորհրդի այդ որոշմամբ սահմանված չափերով: Կենտրոնական բանկի խորհուրդը սահմանում է երաշխավորված ավանդի չափերի հաշվարկման (վերանայման) չափանիշները:»:

***Հոդված 2.*** Օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերում, 14-րդ հոդվածի 1-ին մասում, 19-րդ հոդվածի 4-րդ մասի «ժե.1» կետում «սույն օրենքով» բառերից հետո լրացնել

«եւ Կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ» բառերը:

***Հոդված 3.*** Օրենքի 18-րդ հոդվածի «ե» կետում ՝ «սույն օրենքով սահմանված կարգով, չափերով եւ դեպքերում» բառերը հանել:

***Հոդված 4.*** Օրենքի ուժի մեջ մտնելը եւ անցումային դրույթները

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվա հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքի համաձայն ավանդների չափերի առաջին անգամ վերանայումը կատարվում է 2025 թվականին, մինչեւ այդ տարվա դեկտեմբերի մեկը:

## ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

## «ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԲԱՆԿԱՅԻՆ ԱՎԱՆԴՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՈՒՄԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

«Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվում է սահմանել, որ հինգ տարին մեկ անգամ ավանդների երաշխավորված չափերի վերանայումը կատարվում է ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի որոշմամբ՝ Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի առաջարկությամբ:

Գործող կարգավորման համաձայն Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը առնվազն հինգ տարին մեկ քննարկում է երաշխավորված ավանդի՝ օրենքով սահմանված չափերի վերանայման հարցը՝ Հիմնադրամի կանոնադրությամբ սահմանված չափորոշիչներին համապատասխան: Դրանից հետո երաշխավորված ավանդների չափերը փոփոխվում են օրենքով:

Հաշվի առնելով, որ երաշխավորված ավանդների չափերի վերանայումն իրականացվում է հիմքում ունենալով մի շարք հաշվարկներ ու սահմանված չափանիշներ՝ այդ չափերը նպատակահարմար է, որ իրականացնի այն մասնագիտացված մարմինը, որը տիրապետում է այդ հաշվարկների համար հիմք հանդիսացող

տեղեկատվությանը: Ի լրումն, մեր կարծիքով, նման որոշումները պետք է զերծ լինեն քաղաքական ազդեցությունից:

Նախագծի մշակման ժամանակ ուսումնասիրվել են միջազգային կառույցների՝ Ավանդներն ապահովագրողների միջազգային ասոցիացիայի եւ Միջազգային հաշվարկների բանկի կողմից ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցման հիմնարար սկզբունքները: Սկզբունքներով նախատեսված է, որ ավանդների երաշխավորման ոլորտում քաղաքականություն մշակող մարմինները պետք է հստակ սահմանեն երաշխավորված ավանդներն ու դրանց չափը: Ընդ որում՝ սկզբունքը նաեւ նախատեսում է, որ երաշխավորված ավանդի չափերը կարող են սահմանվել ինչպես օրենքներով, այնպես էլ ենթաօրենսդրական ակտերով: Հետեւաբար, նախագծով առաջարկվող իրավակարգավորումը բխում է միջազգայնորեն ճանաչված եւ կիրառելի սկզբունքների պահանջից: